ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

10 նոյեմբերի 2017 թվականի N 182-Ա

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Աբովյանի N 7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 1-ի N 9 արձանագրությունը *(որոշումը)* **կարգադրում եմ.**

1. ***Գոհար Ժորայի Գասպարյանին*** 2017 թվականի նոյեմբերի 10-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Աբովյանի N 7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ *նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:*

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի *«Գ. Գասպարյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին»* N 148-Ա կարգադրության 2-րդ կետը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Գ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի նոյեմբերի 10
ք. Հրազդան